ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«02» «սեպտեմբերի» 2024թ. N ԱՊՁ/569-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԳՆԱՀԱՏՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ՝ ԱՐՏԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱԿԱՏՐՈՋԸ, ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի և 2-րդ կետի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

հրամայում եմ՝

1.Հիմք ընդունելով ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 22-ին կայացած գնահատման նիստի թիվ 04 արձանագրությունը, Արտակ Կարապետյան ԱՁ-ն (ՀՎՀՀ-04726413, գրանցման հասցե ք.Արմավիր,Պտղունք,Թամանյան փ,տ.7) ,որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտած մասնակից, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Դ. ԴԱՎԹՅԱՆ

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-42-62, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com